

յիշատակութիւն հասած է մեզի: Ձաքարիա Սարկաւազ Համադասպի յաջորդ կը նշանակէ Հայր Վասիլ ըստ իր տեսած խաչքարի մը արձանագրութեան, ԶԿ (1311) թուականով: Այդ խաչքարը այժմ գոյութիւն չունի Յովհաննափանք: Սակայն հոս չփոթութիւն մը կայ:

Էջմիածնայ նախկին հաւաքման թուահամարով 380/240 ձեռագիր Աւետարանը պրտւած է «Ի թուականիս հայոց ԶԾԹ (1310), յաշխարհակալութեան ազգին նետողաց Ղարապանտա զանին եւ Հայոց թագաւոր Ալինախին եւ ի դատապետութեան մեծ իմաստնոյ Եսայոյն... գրեցաւ Եպիսկոպոսութեան եւ յառաջնորդութեան աթոռոյս (Յովհաննափանքի) տէր Ներսէսի որբափայլ եւ ճրկնազգեաց զուարթնոյ, յիշխանութեան մերոյ գաւառիս Քրդին՝ որդոյ Տայիրին, թոռն մեծին եւ բարեպաշտ Քրդին»: Հոս յիշուած «դատապետ»ը անտարակոյս Գլաճորի համալսարանին ուսուցչապետ Եսայի Նչեցին է, որ ամենայն իրաւամբ կրնար յիշուիլ: Իսկ յիշուած «Հայոց թագաւոր Ալինախ» Լեւոն Գ-ի նոյնանուն որդին է (Ռուբէն ալ կոչուած) և եղբայր Հեթում Բ-ի: Կիլիկիոյ Հայոց թագաւոր ըլլալու ցանկութիւն ունէր: Կ'երեւի թէ թագաւոր եղած ըլլալու նման լուր մը տարածուած էր եւ մեր այս ձեռագրին յիշատակադրողը հաւատացած էր լուրին: Ալինախ 1317ին մեռաւ: Նետողաց թագաւորը Ղարապանտա՝ ծանօթ է նաեւ Ուլուճայգօ՝ ծննդեամբ քրիստոնեայ, եղբայրն էր Ղազան Խանին, բուն անուամբ Մուհամատ Ղարապանտա կամ աւելի ճիշդ՝ Խուտապանտա, աշխարհակալեց 1304էն 1316: Այսպէս ուրեմն ժամանակագրականօրէն յիշատակարանին տրւած ԶԾԹ (1310) թուականը ճիշդ է եւ Համադասպ Եպիսկոպոս վախճանած ըլլալու է 1300-1310 թուականներուն միջեւ ատեն մը:

Տ Ե Ր Ն Ե Ր Ս Է Ս Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Դսեղի Մամիկոնեան զերդաստանէն է նաեւ այս Ներսէս Եպիսկոպոսը, որ Յովհաննափանքի առաջնորդ եղած կը յիշուի: Ձաքարիա Սարկաւազ իր Պատմութեան Գ Մասին մէջ կը յիշէ «Թուին ԶԿ (1318) . եղեւ Հայր Ներսէս: Սա ազգական էր Համադասպայ. զայս ուսաք ի յիշատակարանաց զըրոց, զոր ետ գրել. եւ բազումք կան զըոց նորա առ մեզ» (էջ 30):

Սակայն վերը տեսանք որ ԶԾԹ (1310)ին ան կը յիշուի իբր առաջնորդ Յովհաննափանքի, որով գուցէ չփոթութիւն մը կայ Ձաքարիա Սարկաւազի վկայութեան մէջ: Նոյն ատեն Ձաքարիա կը գրէ. «Թուին ԶԿ (1311) եղեւ Հայր Վասիլ (Յովհաննափանքի առաջնորդ): Չայս ուսաք յարձանաց խաչին՝ յորում գրեալ էր, զՎասիլ հայր Յօհաննու վանից՝ Առաջնորդ Շիրակայ եւ ամենայն Անրերգու, յիշեցէք ի Քրիստոս: Թուին ԶԿ (1311)» (էջ 30): Դժբախտաբար Ձաքարիա Սարկաւազի յիշած խաչքարը այժմ գոյութիւն չունի Յովհաննափանքի մէջ, ըստ Փրոֆ. Կարօ Ղաֆադարեանի:

Իսկ Տէր Ներսէսէ մեզի հասած է երկրորդ ձեռագիր մը Վենետիկի Մխիթարեան հաւաքման մէջ, որուն մասին Հ. Ալիշան կը տեղեկացնէ որ մեծադիր հատոր մըն է. «Սարգսի Մեկնութեան Կաթողիկեայ թղթոց՝ գրելոց յամս 1317-20 (որ կայ առ մեզ)» («Այրարատ», էջ 172): Ուրեմն ստիպուած ենք ենթադրել որ Ձաքարիա Սարկաւազ Հայր Վասիլի խաչքարին արձանագրութեան թուականը լաւ չէ կարդացած եւ Վասիլ առաջնորդ պէտք է եղած ըլլայ Տէր Ներսէսէ վերջ: 1317-1320 թուականով Վենետիկի Մխիթարեանց հաւաքման Տէր Ներսէսի յիշատակարանին համաձայն, իր հարազատ եղբայրը կը կոչուէր Գրիգոր, իսկ հայրն ու մայրը՝ Շիրինշահ եւ Տաւնիա, իսկ «ձեռնասուն հոգեւոր որդեակն իւր Յակոբոս, որ է սպասաւոր բանի»: